ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԱՆԳԼԻԱՆ 1890-ԱԿԱՆ ԹԹ.

Լ. Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ

1878 թ. Բեռլինի կոնգրեսը, ինչպես հայտնի է, չլուծեց Հայկական հարցը, այլ միայն դարձրեց առուծախի առարկա խոշոր պետությունների ձեռքին։ Արևմտյան տերությունների եսասեր քաղաքականությունը առաջացրեց հայ ժողովրդի խոր հիասթափությունը, քանի որ նրանց դիմադրության հետևանքով Ռուսաստանին չմիացվեցին Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ։ Ինչ վերաբերում է սուլթանական կառավարությանը, ապա նա դժգոհ էր, որ Հայկական հարցը ստացավ միջազգային բնույթ, խոշոր պետությունների ձեռքին դարձավ գործիք՝ սիստեմատիկ միջամտելու Թուրքիայի ներքին գործերին։ Ուստի սուլթանը որոշեց արագացնել իր հրեշավոր ծրագրի իրագործումը՝ Հայկական հարցի «լուծումը» արևմտահայության բնաջնջման միջոցով։ Օսմանյան պետության կառավարող շրջանների հաշվարկներով դա կվերացներ մեծ տերությունների կողմից Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, իրենց արևելյան էքսպանսիոնիստական քաղաքականությունն իրագործելու հիմնական առիթներից և նեցուկներից մեկը։ Այսպիսով արևմտահայությունը թե՛ եվրոպական պետությունների և թե՛ Թուրքիայի կողմից զոհաբերվում էր «մեծ քաղաքականության» շահերին։

Սուլթանական կառավարությունը, ուժեղացնելով արմենոցիդի քաղաքականությունը, 1890-ական թթ. անցավ հայերի մասսայական արյունալի ջարդերի կազմակերպմանը։ 1894 թ. ամռանը սուլթան Աբդուլ-Համիդ II-ի կարգադրությամբ թուրքական 4-րդ կորպուսը Զեքի փաշայի հրամանատարությամբ, համիդեական քրդական հեծյալ ջոկատների և բաշիբոզուկների աջակցությամբ, հարձակվեց Սասունի վրա և կազմակերպեց մասսայական կոտորածներ։

1895—1896 թթ. սուլթանական կառավարությունը շարունակեց հայկական ջարդերը Մարաշում, Տրապիզոնում, Ուրֆայում, Կարինում, Երզնկայում, Մալաթիայում, Տիգրանակերտում, Արաբկիրում, Խարբերդում, Սեբաստիայում, Ամասիայում, Կեսարիայում, Վանում, Թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում, անգամ եվրոպական դեսպանների աչքի առաջ՝ Կ. Պոլսում[1]։

Կասկածից վեր է, որ ջարդերը սուլթանիզմի կողմից պլանավորված էին։ Դա հաստատվում է բազմաթիվ փաստերով։ Սասունի կոտորածից առաջ թուրքական զինվորների համար կարդում են սուլթանի հրովարտակը, որում ասվում էր, որ «զինվորները կարող են անել՝ ինչ որ ցանկանան, կենդանի ամեն ինչ ոչնչացնելու պայմանով»[2]։ Տրապիզոնում հայերի ջարդն սկսվեց

---

1 *Տե՛ս* «Геноцид армян в Османской империи», под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

2 АВПР, ф. Пос-во в Константинополе, 1894, *д. 3176, л. 98—99,* Максимов—Нелидову, 13 августа 1894.

զինվորական շեփորների աղդանշանով[3]։ Կոնիա քաղաքի ռուսական կոնսուլ Լիվիտսկին վկայում է, որ Կեսարիայի ու Գյուրունի ջարդերը տեղի ունեցան նախատեսված ժամկետին և պլանավորված ձևով[4]։ Տեղական թուրքական իշխանությունները ջարդարարներին տալիս էին ղենք, բաժանում նրանց խմբերի, նշանակում ղեկավարներին, պայմանավորվում օրվա և ժամի մասին, նույնիսկ նախօրոք փոսեր էին փորել տալիս՝ սպանվածներին թաղելու համար։ Մահմեդականների մոլեռանդությունը բորբոքելու և նյութապես նրանց շահագրգռելու նպատակով ջարդերի կազմակերպիչները պրովոկացիոն ձևով հայտարարում էին, որ իբր թե հայերը սպառնում են նրանց և կոչ էին անում՝ կոտորել հայերին, որոնց գույքն ու հարստությունը պատկանում է մահմեդականներին[5]։

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրլյանը սուլթանին ուղղած բողոքում ասում է. «Այդ ոճրագործություններն եղել են նախօրոք պլանավորված», տեղական իշխանությունները ոչ միայն ոչինչ չարեցին կոտորածները կանխելու համար, այլև «խրախուսեցին ջարդերն ու կողոպուտը։ Զորքերն էլ մասնակցեցին անկարգություններին»[6]։ Անգլիացի արևելագետ Մ. Մակ-Կոլը գրել է, որ հայկական ջարդերը թուրքական «կառավարության, և ոչ թե տեղական բնակչության ձեռքի գործն են... Կառավարությունը չարիքի սկիզբն է ու սկզբնաղբյուրը»[7]։

Հայկական ողբերգության տարիներին Բեռլինի տրակտատը ստորագրած, նրա 61-րդ հոդվածով արևմտահայության կյանքն ու սեփականությունը ապահովելու խոստումներ տված խոշոր պետությունները չկատարեցին իրենց վրա վերցրած պարտավորությունները, չկանխեցին արյունալի ջարդերը։ Նրանք հետապնդում էին միմիայն սեփական շահերը։ Հայկական վիլայեթներում ստեղծված ողբերգական իրավիճակը նրանք ձգտում էին օգտագործել Թուրքիայում իրենց գերիշխանությունը հաստատելու և ամրապնդելու համար։ Ահա թե ինչու, երբ նրանցից մեկը փորձում էր ճնշում գործադրել սուլթանական կառավարության վրա, ապա մյուս պետությունները հակադրվում էին նրան, «դառնում» Թուրքիայի բարեկամներ։ Այդպես է եղել մեծ տերությունների քաղաքականությունը ողջ արևելյան հարցի զարգացման ընթացքում, այդպես է եղել և Հայկական հարցում։ Նման հաշվենկատ և նենգ գործելակերպը բնորոշ էր հատկապես անգլիական բուրժուազիային, նրա երկու գլխավոր քաղաքական կուսակցություններին՝ պահպանողականներին և լիբերալներին։

Դարավերջին Անգլիայի տնտեսական և քաղաքական ազդեցությունը Թուրքիայում թուլացել էր, սուլթանական կառավարությունն էլ՝ բարձրացրել էր Եգիպտոսից անգլիական զորքերը հանելու հարցը։ Գաղութարարական հողի վրա խիստ սրվել էին Անգլիայի հարաբերությունները մյուս մեծ պետությունների հետ։ Բարդ միջազգային իրավիճակից ելնելու, արտաքին քաղաքականու-

---

3 Տե՛ս նույն տեղում, 1895, գ. 3179, թ. 113—119, Гиппиус—Нелидову, 6 ноября 1895, № 183.

4 Տե՛ս նույն տեղում, 1896—1897, գ. 3184, թ. 146—149, Приложение к донесению Ливитского Нелидову, 14 марта 1896, № 4.

5 Տե՛ս «Братская помощь пострадавшим в Турции армянам», ч. II, М., 1898, էջ 52։

6 АВПР, ф. Политархив, 1896, գ. 3449, թ. 63—64, Обращение М. Измирляна, 4 декабря 1895.

7 М. Мак-Колль, Султан и державы, СПб., 1897, էջ 21։

Բյան պրոբլեմները լուծելու նպատակով անգլիական կառավարությունը XIX դարի վերջին փորձեց օգտագործել արևելյան և Հայկական հարցը, բնավ չմտահոգվելով արևմտահայերին որևէ էական օգնություն ցույց տալու խնդրով։ Անգլիային սոսկ հետաքրքրում էր Հայկական հարցի հողի վրա դիվանագիտական կոմբինացիաներ կատարելու, մրցակիցների համար որոգայթներ ստեղծելու միջոցով Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում իր ազդեցությունն ուժեղացնելու հնարավորությունը[8]։

Սկզբում Անգլիան փորձեց բանակցություններ վարել Գերմանիայի, Ֆրանսիայի, ապա՝ Ռուսաստանի հետ Թուրքիան մասնատելու վերաբերյալ[9]։ Բայց համաձայնության չգալով նրանց հետ, հրաժարվեց այդ մտադրությունից ու սկսեց գործել ինքնուրույն։ Անգլիական դիվանագիտությունը ծրագրեց օգտագործել հայ ազգային-ազատագրական շարժումը սուլթանական կառավարության վրա ճնշում գործադրելու նպատակով, որպեսզի ստիպեր սուլթանին հրաժարվել Ռուսաստանի հետ մերձենալուց և վերականգներ Անգլիայի վաղեմի տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը Թուրքիայում։ Եթե այդ պլանը անհաջողության մատնվեր, Անգլիան նախատեսում էր տապալել Աբդուլ-Համիդ II-ին[10]։ Անգլիական դիվանագիտության այդ գաղտնիքը հասկացավ Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությանը նա հաղորդում է. «Սուլթանը որքան ավելի շատ է վստահություն տածում Ռուսաստանի նկատմամբ և ցանկանում նրա հետ մերձենալ, այնքան տարբեր կողմերից ավելի շատ ուժ է գործադրվում, գրգռելու նրա կասկածամտությունը, իբր թե մենք նրա նկատմամբ թշնամական տրամադրություն ունենք, որպեսզի հեռացնեն մեզնից»[11]։

Զգտելով սուլթանին իրեն ենթարկել, Անգլիան դեմագոգիկ ձևով նրանից պահանջում էր Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի համաձայն հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնել, անգամ ինքնավարություն տալ Արևմտյան Հայաստանին։ Իրականում Հայկական հարցը նրա համար առուծախի առարկա էր։ Դրա ապացույցն է Անգլիայի պրեմիեր մինիստր Սոլսբերիի զրույցը Լոնդոնի Թուրքական դեսպանի հետ։ Զրույցի ժամանակ Սոլսբերին անգլո-թուրքական հարաբերությունների կարգավորման համար որպես պայման թուրքական կառավարությունից պահանջեց՝ չբարձրացնել Եգիպտոսից անգլիական զորքերը դուրս բերելու հարցը և հրաժարվել Ռուսաստանի հետ մերձենալու մտադրությունից։ Հակառակ դեպքում, սպառնում է Սոլսբերին, «Բարձր Դուռը իրեն միայն անհանգստություն կպատճառի՝ ոչինչ չշա-

---

8 Այս պրոբլեմի ուսումնասիրությանն է նվիրված նաև Գ. Մ. Հարությունյանի «Անգլիան և հայկական հարցը XIX դարի 90-ական թվականների կեսերին» հոդվածը։ Տե՛ս «Новая и новейшая история», 1959, № 6.

9 Թուրքիան մասնատելու դեպքում Անգլիայի կառավարող շրջանները նախատեսում էին գրավել «Հիվանդ մարդու» ժառանգությունից առյուծի բաժինը՝ հավերժացնել Եգիպտոսի օկուպացիան, ամրանալ Միջագետքում, Կիպրոսում և Հնդկաստանի ծովային ու ցամաքային ճանապարհներին գտնվող արաբական երկրներում, դրա դիմաց Ռուսաստանին թույլատրել գրավել Արևմտյան Հայաստանը, Բոսֆորի նեղուցը և Կ. Պոլիսը (տե՛ս «Красный Архив», 1931, т. 4—5 (47—48), էջ 53)։

10 „Die Grosse Politik der Europäischen Kabinette 1871—1914", Berlin, 1922—1927, Bd. XII, № 3073. Մնաերնիխի հաղորդումը, 25 նոյեմբերի 1896։

11 АВПР, ф. Канцелярия МИД, 1893, գ. 24, թ. 590, Секретное донесение Нелидова—Гирсу, 28 декабря 1895, № 151.

հելով»[12]։ Դրանով Սոլսբերին դեսպանին հասկացնում էր, որ եթե սուլթանը համառի եգիպտական հարցում, ապա անգլիական կառավարությունն էլ կպընդի Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու իր պահանջը և, ընդհակառակը, եթե սուլթանը հաշտվի Եգիպտոսն անգլիական տիրույթ դառնալու փաստի հետ, ապա Անգլիան իր հերթին չի բարձրացնի Հայկական հարցը։

Թուրքիայի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով անգլիական կառավարությունն օգտագործում է հասարակական կարծիքը։ Լոնդոնում կազմակերպվում են հակաթուրքական ցույցեր, թերթերը տպագրում են հակաթուրքական հոդվածներ։ Այս պայմաններում Անգլիան պահանջեց Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններից կազմել հանձնաժողով և ուսումնասիրել 1894 թ. Սասունում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները։ Ռուսական դիվանագետ Մ. Պրժևալսկին, ճիշտ կռահելով Անգլիայի քաղաքական այս խաղի իսկական նպատակը, Կ. Պոլսից հաղորդում է. «Անգլիական քաղաքականության ձեռքին Հայկական հարցի բորբոքումը... հանդիսանում է իր շահերը հետապնդելու ժամանակ թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու միջոցներից մեկը»[13]։

1895 թ. անգլիական կառավարության նախաձեռնությամբ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները մշակեցին հայկական վիլայեթներում անցկացվելիք ռեֆորմների նախագիծ և մայիսի 11-ին այն հանձնեցին սուլթանական կառավարությանը՝ հաստատելու և իրագործելու համար։ Սակայն քանի որ մեծ տերություններից ոչ մեկը իրականում շահագրգռված չէր հայ ժողովրդի ծանր վիճակի բարելավման խնդրով, նրանց կազմած ռեֆորմների նախագիծը կրում էր ձևական բնույթ, որոշ հոդվածներ էլ մեռած տառի տպավորություն էին թողնում։

Չնայած ռեֆորմների մայիսյան նախագիծը խիստ սահմանափակ բնույթի էր, սուլթանը մերժեց այն, սակայն հետո՝ 1895 թ. հոկտեմբերին, մեծ պետությունների ճնշման տակ հարկադրված հաստատեց, բնավ մտադրություն չունենալով գործադրել։ Սուլթանը ոչ միայն չիրագործեց հայկական բարենորոգումները, այլև շարունակեց հայերի ջարդերը, իսկ Անգլիան և մյուս պետությունները չդիմեցին ոչ մի գործնական քայլերի կոտորածները կանխելու ուղղությամբ։

Արևելյան հարցում անգլիական երկու իշխող կուսակցությունների՝ լիբերալների ու պահպանողականների կառավարությունները միատեսակ քաղաքականություն էին վարում։ Հայկական հարցը, հայտարարում է լիբերալների կուսակցության առաջնորդ Գլադստոնը, կուսակցական հարց չէ, և կառավարության քաղաքականությունն այդ հարցում պաշտպանություն է գտնում ամբողջ ազգի կողմից[14]։ Մի այլ անգամ Գլադստոնը պահանջեց կառավարությունից Թուրքիայի դեմ գործել մենակ, առանց եվրոպական մյուս պետությունների համաձայնության[15]։ Այս շրջանում հայ ազգայնական կուսակցությունների որոշ ղեկավարներ շարունակում էին հավատալ Անգլիայի

---

12 В. М. Хвостов, История дипломатии, т. II, М., 1963, էջ 335։

13 АВПР, ф. Пос-во в Константинополе, գ. 3178, թ. 409. Секретное донесение М. Пржевальского, 29 сентября 1895.

14 Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896. էջ XI—XXIII.

15 М. Мак-Колль, նշվ. աշխ., էջ 193։

բարի մտադրություններին ու կույր գործիքի դեր էին կատարում անգլիական կառավարության ձեռքին։ Հատկանշական է, որ հայ բուրժուազիայի անգլիական կողմնորոշում ունեցող մասը Անգլիայից խնդրում էր ստեղծել անկախ հայկական թագավորություն և անգամ հայկական գահի թեկնածու էր առաջադրում անգլիական թագուհի Վիկտորիայի ազգական դուքս Թեկին[16]։

Թուրքիայում հայկական կոտորածների ժամանակ անգլիական կառավարության դիվանագիտական քայլերը, Անգլիայի պաշտոնական և կիսապաշտոնական մամուլի կողմից տարվող հակաթուրքական կամպանիան իրականում չէին հետապնդում հայերին պաշտպանելու, նրանց բնաջնջմանը վերջ դնելու նպատակը։ Այս ամենի գլխավոր խնդիրներն էին արդարացնել Թուրքիայի հնարավոր մասնատման անգլիական մտադրությունները, կանխել Գերմանիայի հետ Թուրքիայի սկսած մերձեցումը և հրահրել ռուս-թուրքական մի նոր ընդհարում։ Անգլիական դիվանագիտությունը գտնում էր, որ միջազգային հարաբերությունների այսպիսի սրման պայմաններում ավելի հեշտ կլինի իրականացնել Անգլիայի նվաճողական ծրագրերը Մերձավոր Արևելքում և այլուր։ Ահա թե ինչու Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը ցարին գրում էր, որ Անգլիան Հայկական հարցի օգնությամբ ձգտում է Ռուսաստանին ընդհարել Թուրքիայի հետ. «Չի կարելի չընդունել, որ... գործելու համար օբյեկտն ընտրված է խիստ հաջող»[17]։

Անգլիական կառավարության ճնշումը Թուրքիայի վրա հատկապես ուժեղացավ 1895 թ. ամռանը։ Նա ռազմանավեր ուղարկեց թուրքական ջրերը և սպառնաց Կ. Պոլսին։ Անգլիական որոշ շրջաններ պահանջում էին պատերազմ հայտարարել Թուրքիային և գահազրկել Աբդուլ-Համիդ II-ին[18]։ Սոլսբերին Լոնդոնի քաղաքագլխի պատվին կազմակերպված ճաշկերույթում հայտարարեց, որ եթե սուլթանը շարունակի հրաժարվել ռեֆորմների իրագործումից, ապա «թուրքական կայսրությունը կհատուցի իր գոյությամբ»[19]։ Սպառնական տոն ուներ նաև օգոստոսի 15-ի նրա ելույթը պառլամենտում, իսկ արտաքին գործերի մինիստր Քեմբեռլեյը պահանջում էր «ուժի լեզվով»[20] խոսել սուլթանի հետ։ Մեծ տերությունները, հասկանալով Անգլիայի քաղաքական քայլերի և դիվանագիտական հայտարարությունների իսկական իմաստը, խույս տվեցին նրա առաջարկներից։

Անգլիական կառավարությունը, համոզվելով, որ Հայկական հարցի հողի վրա չի կարողանում համաձայնություն կնքել ոչ գերմանա-ավստրիա-իտալական եռյակ միության, ոչ էլ Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ Թուրքիայի մասնատման կամ Օսմանյան կայսրությունում նոր առավելություններ ձեռք բերելու վերաբերյալ, 1895 թ. վերջերից սկսեց աստիճանաբար թուլացնել ճնշումը սուլթանական կառավարության վրա։ Սկսեց փոխվել նաև անգլիական մամուլի դիրքը, պետական ու քաղաքական գործիչների ելույթներում թողնեց հակաթուրքական պաթոսը։ Անգլիական ռազմանավերը ետ կանչվե-

---

[16] Տե՛ս „Blue Book", Turkey, 1896, № 3, էջ 26։ Տե՛ս նաև «Մշակ», 1894, № 144։

[17] АВПР, ф. Политархив, 1895, գ. 3447, թ. 228, Нелидов—Николаю II, 6 июня 1895, № 71.

[18] Տե՛ս «Times», 10 սեպտեմբերի 1895։

[19] АВПР, ф. Канцелярия МИД, 1895, գ. 69, թ. 241—242, Стааль—Лобанову-Ростовскому, 13 ноября 1895, № 58.

[20] „Hansard's Parliamentary Debates", 1896, vol. 37, էջ 115։

ցին թուրքական ջրերից։ Սոլսբերին հայտարարեց. «Ամեն մի սպասելիք, թե Անգլիան մենակ միջոցառումների կդիմի Հայկական հարցում, պատրանք է»[21]։ Անգլիական դիվանագիտությունը մինչև անգամ Արևմտյան Հայաստանում թուրքական արյունարբու քաղաքականությունն արդարացնելու դիրք գրավեց։ Ցնորք կլինի ենթադրել, հայտարարում է Սոլսբերին, թե սուլթանն է հրամայել կազմակերպել հայկական ջարդերը, դա մոլեռանդ մահմեդականների ձեռքի գործն է[22]։ Սուլթանին պետք է ժամանակ տալ ռեֆորմների իրագործման համար։ Սոլսբերին գնում է ավելի հեռու։ Ըստ էության նա հանդես է գալիս ռեֆորմների իրագործման դեմ, ասելով, որ մահմեդական բնակչությունը չպետք է տուժի դրանից, նրան չի կարելի զոհաբերել քրիստոնյաներին։

Անգլիական կառավարությունը չէր ժխտում Թուրքիայում եղած սարսափելի ջարդերի փաստը, բայց այժմ գտնում էր, որ հայկական ռեֆորմները կենսագործելու հարցում Անգլիան չպետք է պառակտվի մյուս մեծ պետությունների հետ, չպետք է ինքնուրույն ճնշում գործադրի սուլթանի վրա, քանի որ մենակ չի կարող հասնել ռեֆորմների իրականացմանը[23]։ Մինչև այդ թուրքական ղորքերի և համիդեականների բարբարոսությունները մերկացնող, արտաքին գործերի մինիստրության օրգան «Կապույտ գիրքը» 1896 թ. առանձին համարներում սկսում է զետեղել նյութեր, որոնցով հայերն են դառնում ջարդերի պատասխանատուն, Թուրքիան պատկերվում է որպես դրախտ արևմտահայության համար, իսկ սուլթանը՝ բարեգործ, որը բացառիկ դեպքերում է դիմել պատժի գործադրման, «երբ սպառվել է նրա համբերությունը»[24]։

Այդ շրջանի հայտնի արևմտահայ քաղաքական գործիչ Մինաս Չերազը հիասթափված՝ Լոնդոնից հաղորդում է, որ Ֆորին օֆիսի չինովնիկներից մեկը իրեն ասաց. «Իրավունք չունիք մենք գանգատելու։ Ձեր հեղափոխականներն են ձեր դատին ամենեն ավելի վնասողները։ Ասոնք դաշույն ու ռումբ կգործածեն, ճիշտ անիշխանականներուն պես։ Մենք, որ մեր երկրներին մեջ կպատժենք անիշխանականներին, մի՞թե կրնանք պաշտպանել զանոնք Տաճկաստանի մեջ»[25]։

Լռեցին նաև անգլիական «հայասեր» գործիչները։ Գլադստոնն արդեն հրաժարվում է ելույթ ունենալ միտինգներում, Ռոզբերին կառավարությանը կոչ է անում սեպարատ կարգով չգործել Հայկական հարցում, քանի որ Անգլիան կենսականորեն շահագրգռված չէ Թուրքիայի դեմ պատերազմով. անգլիական շահերը բաղկացած են հազար մասերից, չի կարելի հօգուտ մի, թեկուզև կարևոր մասի, զոհաբերել ինը հարյուր իններորդը[26], իսկ «Standard»-ը, պաշտպանելով սուլթանի կառավարությանը, գրում է. «Ոսկե հրվանդանի պետական գործիչները հեռագրով չեն կարող բարեկարգել մի ամբողջ նահանգ»[27]։

Թուրքիայում Անգլիայի ներկայացուցիչները բացահայտ թշնամական դիրք գրավեցին հայերի արդարացի պահանջների նկատմամբ։ Դա երևաց

---

21 «Times», 11 նոյեմբերի 1896։ Տե՛ս նաև «Մշակ», 1896, № 9։
22 Տե՛ս «Standard», 1 փետրվարի 1896։
23 Տե՛ս „Hansard's Parliamentary Debates", 1896, vol. 37, էջ 115։
24 „Blue Book", Turkey, 1896, № 8, էջ 108։
25 Մինաս Չերազ, Ազգային խնդիրներ, Պարիս, 1927, էջ 31։
26 Տե՛ս М. Мак-Колль, նշվ. աշխ. էջ 211։
27 «Новое время», СПб., 20 июня и 1 августа 1895.

1896 թ. Վանի դեպքերի ժամանակ։ Անգլիական հյուպատոսն ու փոխհյուպատոսը, անգլիացի և ամերիկացի միսիոներները, մի կողմից՝ թուրքական զորքերի և համիդիական հրոսակախմբերի հարձակման դեմ ինքնապաշտպանության դիմած հայերին հորդորում էին զինաթափվել, իսկ մյուս կողմից՝ հայերի կառուցած դիրքերի, ամրությունների և զինված ուժերի քանակի մասին տեղեկություններ էին հաղորդում թուրքական հրամանատարությանը։ Գործը հասավ նրան, որ հայերի դեմ թուրքական հրանոթների կրակը ղեկավարում էր Վանի անգլիական փոխհյուպատոս Վիլյամսը։ Այդ նույն պահին հյուպատոս Թեյլորը ազնիվ խոսքով երդվեց Վանի պաշտպաններին, որ եթե նրանք զինաթափվեն և հեռանան Վանից՝ գնան Պարսկաստան, ապա նա երաշխավորում է նրանց ու նրանց ընտանիքների անդամների կյանքը, դադարեցնել կտա հայերի ունեցվածքի կողոպուտը։ Արտակարգ ծանր վիճակի մեջ գտնվող Վանի պաշտպանները հարկադրված համաձայնվեցին Թեյլորի առաջարկած պայմանների հետ, սակայն հյուպատոսը երդմնազանց եղավ։ Վանի թուրքական կուսակալը զորքերի մի մասն ուղարկեց ջախջախելու Պարսկաստան ուղևորված մարտիկներին, իսկ մյուս մասին՝ հրամայեց անմիջապես հարձակվել անպաշտպան մնացած քաղաքի հայ բնակչության վրա։ Երկու օրում Վանում կոտորվեց 20 հազար հայ և կողոպտվեց 6500 տուն։ Թեյլորը սառնասրտորեն դիտում էր այդ բոլորը[28]։

Պառլամենտում, պաշտպանելով անգլիական ներկայացուցիչների խարդախ գործողությունները և արդարացնելով թուրքերի վայրագությունները, արտաքին գործերի մինիստրի տեղակալ Քերզոնը Ջ. Ֆլինի հարցին պատասխանում է, որ թուրքական իշխանության տեղական մարմինները և զորքը վերականգնել են կարգը Վանում։ Նրանք «լավ կատարեցին իրենց պարտականությունները»[29]։ Թե ինչպես են թուրքերը «լավ» կատարել իրենց պարտականությունները, այդ մասին ականատեսը պատմում է, որ Վասպուրականում թուրք ջարդարարները ո՛չ գյուղ թողեցին, ո՛չ քաղաք, ո՛չ ժամ մնաց, ո՛չ վանք, բոլորը դարձրին ավերակ, ո՛չ հայ մնաց, ո՛չ սրբություն։ Անգլիան աչքերը փակեց, իսկ թուրքական կառավարությունը նրա հովանավորած հայերին կոտորեց։ Անգլիան հայերին միայն խոսքով պաշտպանեց, իսկ թուրքերին գործով օգնեց։ Անգլիական մեծ խոստումները հօդս ցնդեցին[30]։

Ականատեսի պատմածը հաստատում է նաև «Արմենիա» թերթի թղթակիցը։ Նա գրում է. «Վան ևս կոտորվեցավ։ Վան՝ հայության հույսը, Վան՝ Հայաստանի լույսը ճառագայթ. դրախտ աշխարհն ավերակ դարձավ» և զայրույթով բողոքում Անգլիայի և մյուս տերությունների նենգ քաղաքականության դեմ. «Ահա՛ դաշնագիր, ահա՛ պայման, ահա՛ 61-րդ հոդված, ահա՛ անգլիական հյուպատոս, ահա՛ քաղաքակրթություն»[31]։ Թղթակիցն իրավացիորեն նշել է, որ եթե ջարդերի կազմակերպիչը սուլթանի կողմից ուղարկված Սաադեդդին փաշան էր, ապա հայերի կրած մեծ կորուստների պատճառը՝ Վանի անգլիական հյուպատոսն ու փոխհյուպատոսն էին։

---

28 Տե՛ս Հ. Բրամյան, Հուշարձան, Աղեքսանդրիա, 1929, հատ. Ա. էջ 395—398։ Տե՛ս նաև В. Т. Маевский, Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Тифлис, 1901, էջ 115։

29 „Hansard's Parliamentary Debates", 1896, vol. 42, էջ 69։

30 Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 42, ց. 1, գ. 67, թ. 24—25։

31 «Արմենիա», 12 օգոստոսի 1896։

Ժամանակ առ ժամանակ անգլիական պառլամենտում լսվում էին նաև քննադատական խոսքեր հայկական հարցում կառավարության քաղաքականության հասցեին։ Այդ տեսակետից հետաքրքրական է լորդ Ռոզբերիի 1896 թ. փետրվարի 11-ի ելույթը։ Քննադատելով Սոլսբերիի պահպանողական կառավարության դիծը, նա նշում էր, որ մինչև այժմ հայերի դրության բարելավման հույսը դրվում էր Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և Կիպրոսի կոնվենցիայի վրա, բայց դրանք դուրս եկան «խաբեություն և թակարդ»։ «Սոլսբերին ասում է՝ ինչ կարող է անել անգլիական կառավարությունը, եթե սուլթանը չի կատարում իր ստանձնած պարտավորությունները. «Մենք ծովային երկիր ենք և ոչ թե ցամաքային։ Մենք չենք կարող ռազմածովային նավատորմիղը կանգնեցնել Հայաստանի կենտրոնում...»։ Եթե այդ այդպես է և ձեր միջոցները չեն համապատասխանում, ապա ինչո՞ւ դուք խոստացաք պաշտպանել Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանները և ինչ նպատակով Արևմուտքին հավաստիացրիք պաշտպանել հայերին ու հայկական վիլայեթներում ստեղծել կառավարման լավ սիստեմ։ Մի՞թե 1878 թ. անգլիական ռազմական ուժերն ավելի մեծ էին, քան հիմա։ Դուք շատ լավ գիտեք, որ այժմ մեր ուժերը կրկնակի մեծ են, քան այն ժամանակ։ Ինչո՞ւ 1878 թ. մեզ չբացատրեցիք, որ այդ պայմանը, որին հիմարաբար հավատացել ենք, եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ խաբեություն ու թակարդ»[32]։ Միամտություն կլինի լրջորեն ընդունել Սոլսբերիի կառավարության այս քննադատության անշահախնդիր լինելը և հավատալ Ռոզբերիի վրդովմունքի անկեղծությանը։ Լիբերալների ղեկավարի հայտարարություններն առաջին հերթին ներշնչված էին միջկուսակցական պայքարի նկատառումներով, իշխանության ղեկի մոտ կանգնած քաղաքական մրցակցի՝ պահպանողականների հեղինակությանը վնասելու ձգտումով։ Եթե Ռոզբերին իրոք անկեղծ և ճշմարտասեր լիներ, ապա նա պետք է խոստովաներ, որ 1880—1890-ական թթ. հայերին ոչնչով չօգնեցին նաև լիբերալների կուսակցությունը, նրա պարագլուխներ Գլադստոնը և անձամբ ինքը՝ Ռոզբերին, երբ կառավարության ղեկը մի քանի անգամ անցավ իրենց ձեռքը։ Անգլիան խոչընդոտեց արևմտահայկական հողերի միացմանը Ռուսաստանին, դրանով ըստ էության փակեց ֆիզիկական բնաջնջումից հայերի փրկության ուղին և պաշտպանեց քայքայվող Թուրքիային։

Այսպիսով, անվիճելի է այն փաստը, որ Անգլիան իր շահերին համապատասխան օգտագործել է Հայկական հարցը։ Նա, Բեռլինի կոնգրեսից հետո, մեկ «մոռացության» է տվել Հայկական հարցը, մեկ էլ՝ նորից բարձրացրել այն։ Մեկ ձևացել է հայ ժողովրդի պաշտպան, նրան հրահրել սուլթանիզմի դեմ պայքարի, առիթներ ստեղծելով միջամտելու Թուրքիայի ներքին գործերին, փորձել արդարացնելու Թուրքիայի մասնատման իր մտադրությունները, մեկ էլ՝ փաստորեն օգնել է սուլթանին՝ կոտորելու հայերին, սիրաշահել է նրան իր ազդեցությունը Թուրքիայում վերականգնելու և Եգիպտոսում ամրանալու նպատակով։ Անգլիան մի կողմից ձևանում էր Թուրքիային բարեկամ, դաշնակից և սուլթանի «աստվածային» իրավունքների պաշտպան, իսկ մյուս կողմից՝ թուրքահպատակ հայերի հովանավոր ու փրկիչ։ Նա մեկ դատապարտում էր սուլթանին, դիվանագիտական ու պրոպագանդիստական խաչակրաց արշավանք սկսում հայերի «պաշտպանության» օգտին, մեկ էլ՝ ողջագուրվում սուլ-

[32] „Hansard's Parliamentary Debates", 1896, vol. 37, էջ 45—48։

թանի հետ և հայերին հանձնում թուրք ջարդարարների ձեռքը։ Հատկանշական է, օրինակ, 1896 թ. հոկտեմբերի 28-ին Լոնդոնի քաղաքագլխի կազմակերպած ճաշկերույթում պրեմիեր մինիստր Սոլսբերիի արտասանած ճառը։ Նա կրկին ասաց, որ Հայկական հարցի լուծման համար Անգլիան մենակ չի գործի, չի դիմի պատերազմի։ Պատերազմը «կորստաբեր հետևանքներ կունենա մեր առևտրական և քաղաքական շահերի համար»։ Լուծման կարոտ արևելյան հարցերը «չեն կարող մեզ ստիպել հեռանալ այն քաղաքականությունից, որին մինչև այժմ հետևում էինք, կամ ձեռքից բաց թողնել մի թիզ այն հողերից, որոնց մենք տիրապետում ենք այժմ»։ Այնուհետև Սոլսբերին ասաց. «Մեր առաջին պարտավորությունն է պաշտպանել Մեծ Բրիտանիայի շահերը և նրա իրավունքները»[33]։

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Անգլիան չպահանջեց իրագործել մաքիսյան ռեֆորմները, թեև այստեղ հայ ժողովրդի պահանջները համեստ էին։ Հայերը չէին պահանջում «ո՛չ օծված թագավոր Վանի մեջ և ո՛չ էլ անկախ հշխան Էրզերումում... այլ միմիայն մի բան՝ կյանքի, պատվի, գույքի ապահովություն»[34]։

Անգլիական կառավարության այս նենգ և սպեկուլյատիվ քաղաքականությունը երկրի տիրապետող դասակարգերի քաղաքականությունն էր։ Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի աշխատավորները անկեղծորեն համակրում էին հայ ժողովրդին ու կառավարությունից պահանջում՝ ազդել սուլթանի վրա վերջ տալու «արյունահեղ կառնավալին»[35]։ Վ. Ի. Լենինը ուսուցանել է. «Իմպերիալիզմը ազգային քաղաքականություն անվանելը անամոթ սուտ է. ազգի շահերը հակադիր են էքսպանսիայի այդ քաղաքականության յուրաքանչյուր քայլին»[36]։

Անգլիան, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով փոխարինելու նախաձեռնողն էր, 1878 թ. Կիպրոսի կոնվենցիայով սուլթանի տիրապետությունն Արևմտյան Հայաստանում ամրապնդողը, մյուս տերությունների հետ լրիվ պատասխանատու է արևմտահայության ծանր ու ողբերգական վիճակի համար։ Այդ չի կարողացել թաքցրնել անգամ անգլիական հայտնի պետական գործիչ Լլոյդ Ջորջը, որն իր հուշագրերում նշել է. «Բրիտանական կառավարությունն քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897, 1909 թթ. սարսափելի սպանդներին և 1915 թ. ամենասոսկալի կոտորածին»[37]։

Անգլիայի եսասեր քաղաքական վարքագիծը Հայկական հարցում արդարացի քննադատության ենթարկվեց ինչպես անգլիական, այնպես էլ մյուս երկրների շատ հասարակական գործիչների կողմից։ Անգլիայի կառավարող բուրժուական կուսակցությունները ստիպված էին արդարանալ հասարակական կարծիքի առաջ։ Անպաշտպան հայերին լքելու մեղքը, արյունարբու սուլթանին հովանավորելու պատասխանատվությունը նրանք ջանում էին գցել մեկը մյուսի վրա։ 1896 թ. պահպանողականների պարագլուխ Սոլսբերին մեղադրում Լ. Ռոզբերիի լիբերալների կառավարությանն այն բանում, որ վերջինս

33 «Մշակ», 1896, № 131։
34 Նույն տեղում, 1895, № 89։
35 Նույն տեղում, 1896, № 117։
36 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 513։
37 Ллойд Джордж. Правда о мирных договорах, М., 1957, т. 2, էջ 390։

Թուրքիայի դեմ գործել է ոչ թե կոնկրետ քայլերի դիմելով, այլ հորդորների միջոցով։ Լիբերալների ղեկավար գործիչներից Հարկուրտը, 1896 թ. մայիսի 5-ի ելույթում, իր հերթին մերկացնում է պահպանողականների կառավարության քաղաքականությունը։ Մի քանի ամիս առաջ, նշում է Հարկուրտը, Սոլսբերին գտնում էր, որ սուլթանի կատարածը Հայաստանում դեմ էր բանականությանը և աստվածային օրենքներին, իսկ այժմ նա ասում է, որ սուլթանը մեղավոր չէ։ Չէ՞որ, ասում է Հարկուրտը, Սոլսբերին ինքն է կնքել Կիպրոսի կոնվենցիան, պարտավորվել Հայաստանում ռեֆորմներ անցկացնել, իսկ հիմա հայտարարում է, թե Անգլիան պատասխանատու չէ հայկական վիլայեթներում ռեֆորմների ձախողման և ողբերգական իրադարձությունների համար։ Քննադատելով պահպանողականների կառավարության հայկական քաղաքականությունը, Հարկուրտը անհիմն է համարում Սոլսբերիի այն պատճառաբանությունը, որ եթե Անգլիան պատերազմով հարկադրի Թուրքիային Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնել, ապա դա Անգլիայի դեմ համաեվրոպական պատերազմ կառաջացնի[38]։

Հարկուրտը իրավացի էր, քանի որ երբ անգլիական իմպերիալիզմի շահերը պահանջում էին, պահպանողականների կառավարությունը չէր վախենում Անգլիայի դեմ համաեվրոպական պատերազմից և միակողմանի պատերազմներ էր վարում Ասիայի, Աֆրիկայի զանազան երկրներում։

Միանգամայն իրավացի էր ականավոր դանիական բանասեր և հասարակական գործիչ Գեորգ Բրանդեսը, երբ վրդովմունքով նշում էր, թե Անգլիան և մյուս մեծ պետությունները աղմկոտ հայտարարություններից այն կողմ չանցան։ Հայ ժողովրդին թողեցին անպաշտպան, նրան հանձնեցին Թուրք ջարդարարների քմահաճույքին[39]։

АРМЯНСКИЙ ВОПРОС И АНГЛИЯ В 1890-х гг.

Л. А. БАГРАМЯН

(Резюме)

Империалистическая Англия, в целях восстановления своего экономического и политического влияния в Турции и укрепления в Египте, поощряла армянское национально-освободительное движение и демагогически требовала от султана проведения реформ в Западной Армении согласно Берлинскому трактату. Убедившись, что путем нажима на турецкое правительство ей не удастся добиться осуществления своих агрессивных планов, Англия круто изменила свою тактику — начала заигрывать с султаном и поддерживать турецкие власти в подавлении армянского национально-освободительного движения. Использовав Армянский вопрос в своекорыстных целях, Англия, как и другие европейские державы, несет долю вины за армянские погромы, организованные султанским правительством в 1894—1896 гг.

38 Տե՛ս «Մշակ», 1896, №№ 53, 56։

39 Գ. Բրանդես, Հայաստանը և Եվրոպան, Ժընևի, 1907, էջ 3, 4։